

Der Lügner - Սուտասանը



By Hovhannes Toumanian

Կար ու չկար թագաւոր մը կար:

Այս թագաւորը կը հաղորդէ իր երկրի ժողովուրդին,

«Ո՛վ որ այնպիսի սուտ մը խօսի, որ ես ըսեմ՝ սուտ է,

իմ թագաւորութեանս կէսը կը ստանայ»:

Կու գայ հովիւ մը: Կ'ըսէ.

- Թագաւորը ողջ մնայ, իմ հայրս ունէր հաստ գաւազան մը,

զայն այստեղէն երկարելով, երկինքի աստղերը կը խառնէր:

-Կը պատահի, - կը պատասխանէ թագաւորը:

- Իմ պապս ալ ծխամուրճ մը ունէր,

մէկ ծայրը կ'երկարէր՝ արեգակնեն կը վառէր:

Ստախօսը կը հեռանայ գլուխը քերելով:

Կու գայ դերձակ մը: Կըսէ.

-Ներեղութիւն, թագաւոր,

ես աւելի կանուխ պիտի գայի, ուշացայ:

Երէկ շատ անձրեւ եկաւ, կայծակները շառաչեցին,

երկինքը պատռեցաւ. գացած էի կարկատելու:

-Յա~, լաւ ըրած ես,- կ'ըսէ թագավորը,

- Բայց լաո չէիր կարկտած. այս արավոտ քիչ մը անձրեւ եկաւ:

Դերձական ալ դուրս կ'ելլէ:

Ներս կը մտնէ աղքատ գիւղացի մը, կոտը անութին:

-Դու՞ն ինչ կ'ուզես, ա'յ մարդ,- կը հարցնէ թագավորը:

-Ինձի մէկ կոտ ոսկի պարտական ես. եկած եմ տանելու:

-Մէկ կոտ ոսկի՞,- կը զարմանայ թագավորը:

- Սու'տ կը խօսիս, ես քեզի ոսկի պարտական չեմ:

-Քանի որ սուտ կը խօսիմ, թագաւորութեանդ կէտը տուր:

-Զէ', չէ', շիտակ կը խօսիս,- խօսքը կը փոխէ թագավորը:

-Եթէ ճիշդ է ըսածս՝ տու'ր կոտ մը ոսկին:

ճարահատ՝ թագավորը կու տայ կոտ մը ոսկին: